Արձանագրություն N 2

ՋԿ-ԳՀԾՁԲ-19/1-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 29 մայիսի 2019թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Նազարյանը, Վ. Օհանջանյանը, Հ. Սիրունյանը և Է. Մխիթարյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. Հայտերի բացման մասին

Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով ՋԿ-ԳՀԾՁԲ-19/1-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակիցը (ները)

- ՋԿ-ԳՀԾՁԲ-19/1-Տ ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2019 թվականի մայիսի 24-ին, ժամը 14:30-ին:

Մասնակիցների անվանումները	Գտնվելու վայրը, հեռախոսը և էլ. հասցեն
«ԻՐՏԻԳ» ՍՊԸ	էլ. հասցեն՝ irtig@inbox.ru
«ԷՅՋԻ ՖԱԿՏՈՐ» ՍՊԸ	էլ. հասցեն՝ grigoryeritsyan@gmail.com
«ԳՈԼԴ-ՆԵԹ» ՍՊԸ	էլ. հասցեն՝ goldnetltd@mail.ru
«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	էլ. հասցեն՝ gritig@inbox.ru

2. Հայտերն էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն

---

1. **Չափաբաժին՝ 1-ին** «ԻՐՏԻԳ» ՍՊԸ-ի, «ԷՅՋԻ ՖԱԿՏՈՐ» ՍՊԸ-ի և «ԳՈԼԴ-ՆԵԹ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
2. «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված չէ հրավերով սահմանված պահանջներին համապատասխան՝ մասնավորապես **«Տեխնիկական չափորոշիչ»** բաժնում մասնակիցը իր կողմից հաստատված հայտով չի ներկայացրել սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճեն, այլ կցել է Հավելված 4-ը (գնային առաջարկ):

3. ՋԿ-ԳՀԾՁԲ-19/1-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

- Մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4. Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Համապատասխանում է	Չի համապատասխանում
1	«ԻՐՏԻԳ» ՍՊԸ	X	
2	«ԷՅՋԻ ՖԱԿՏՈՐ» ՍՊԸ	X	
3	«ԳՈԼԴ-ՆԵԹ» ՍՊԸ	X	
4	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ		X

Տեղեկատվություն

1. «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն հրավերի 1-ին մասի 1.1 կետով պահանջվող լիցենզիայի՝ շինարարության որակի տեխնիկական հսկողություն հիդրոտեխնիկական ոլորտի ներդիրի փոխարեն կցել է Հավելված 4-ը (գնային առաջարկ):
2. Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով 27.05.2019թ. կասեցրել է նիստը, քարտուղարը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացրել է «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև 29.05.2019թ.-ի 14:30-ը կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի 1-ին մասի 1.1 կետով պահանջվող լիցենզիայան՝ շինարարության որակի տեխնիկական հսկողություն հիդրոտեխնիկական ոլորտի ներդիրը:

5. Տեղեկություններ մասնակիցների կողմից առաջարկված գների վերաբերյալ

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակիցների անունը	Առաջարկված գին առանց ԱԱՀ	ԱԱՀ	Առաջարկված գին ԱԱՀ-ով
Չափաբաժին 1 Նախահաշվային գին 645 000 **Տեխնիկական հսկողության ծառայություններ** (ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Քըրք Քըրքորյան և Այգեստան 2 թաղամասերի կոյուղագծերի կառուցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում)				
1	«ԻՐՏԻԳ» ՍՊԸ	244 000	48 800	292 800
2	«ԷՅՋԻ ՖԱԿՏՈՐ» ՍՊԸ	283 000	-	283 000
3	«ԳՈԼԴ-ՆԵԹ» ՍՊԸ	378 000	-	378 000
4	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	560 000	-	560 000

6. Ուսումնասիրության արդյունքում

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ մինչև 1 աշխատանքային օրվա ավարտը ներկայացրել է հրավերի 1-ին մասի 1.1 կետով պահանջվող լիցենզիայան (շինարարության որակի տեխնիկական հսկողություն հիդրոտեխնիկական ոլորտի) ներդիրը:

7. Գնահատող հանձնաժողովի որոշման վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը համարել հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
2. Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետի և ՋԿ-ԳՀԾՁԲ-19/1-Տ ծածկագրով հրավերի 7.7 կետի մասնակիցները հրավիրվում են գների նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա 31.05.2019թ.-ին ժամը 12:30-ին Ջրային կոմիտեի վարչական շենքում՝ 4-րդ հարկ 400 սենյակ գնումների վարչություն:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-**4**, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____Շ. Բարխուդարյան

Անդամներ _____Ս. Նազարյան

_____Վ. Օհանջանյան

_____Հ. Սիրունյան

_____Է. Մխիթարյան

Քարտուղար _____Ա. Սարգսյան